ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 09.12.2015թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 44/15

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի 23.11.2015թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-44/15 բողոք) և կից փաստաթղթերը, ՀՀ Արարատի մարզպետարանի ներկայացրած 02.12.2015թ. թիվ 1/3/6005-15 գրությունը և կից փաստաթղթերը, «Բարվա» ՍՊԸ-ի 25.11.2015թ. գրությունը և «ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ 15/07» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր) և ԳԲԽ-44/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 07.12.2015թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **<u>«ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>**

«ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 23.11.2015թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ Արարատի մարզպետարանի կարիքների համար՝ ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 2-ի N 766-Ն որոշմամբ ՀՀ Արարատի մարզպետարանին հատկացված միջոցներով իրականացվող ծրագրերի հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով, գնահատող հանձնաժողովի 16.11.2015թ. թիվ 3 որոշմամբ կազմակերպվել է «ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ 15/07» ծածկագրով

առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով համատեղ գործունեության կարգով հայտ է ներկայացրել «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի ու «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ի կոնսորցիումը (այսուհետ նաև՝ Կոնսորցիում), որը պայմանագրի կատարման համար առաջարկել է 59 550 000 ՀՀ դրամ և «Բարվա» ՍՊԸ-ն, որն էլ պայմանագրի կատարման համար առաջարկել է 66 250 000 ՀՀ դրամ:

Ընկերությունը հայտնել է նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 19.11.2015թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի և «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ի կոնսորցիումն էր:

Նույն արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել կատարել հարցում՝ Կոնսորցիում՝ հրավերի 2-րդ մասի, 2-րդ կետի, 3-րդ ենթակետի վերաբերյալ անճշտությունների շտկման մասին: Անհամապատասխանությունը, ըստ գնահատող հանձնաժողովի, եղել է այն, որ Կոնսորցիումը հրավերի 2-րդ մասի, 2-րդ կետի, 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնագիտական փորձառություն չափանիշով չի ներկայացրել հակակարկտային կայանների տեղակայման փորձ:

Ընկերությունը նույն օրը գրավոր պարզաբանում-հիմնավորում է ներկայացրել Հանձնաժողովին առ այն, որ Ընկերության կողմից ներկայացրած փաստաթղթերում անհամապատասխանություններ առկա չեն, ավելին, այդ փաստաթղթերը համապատաս-խանում են հրավերի գնման առարկայի (բնութագրի) պահանջներին և չեն կարող անահամապատասխան լինել, մասնավորապես, նշվել է՝ մասնագիտական փորձառութուն չափանիշով հրավերի 1-ին մասի 2.1. կետի 1-ին պարբերության համաձայն չի պահանջվել հակակարկտային կայանների տեղակայման փորձ, հետևաբար Ընկերությունը ներկայացրել է միայն հակակարկտային կայանների մատակարարման գործարքների պայմանագրերը և հանձնման-ընդունման ակտերը:

Այնուհետև՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.11.2015թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ արձանագրվել է, որ «Լոկատոր» ՓԲԸ-ի և «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ի կողմից համատեղ կարգով ներկայացված հայտը անբավարար է, մասնավորապես, անբավարար է ճանաչվել «մասնագիտական փորձառություն» չափանիշը և «մասնագիտական գործունեության համապատասխանություն

պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը, իսկ Ընթացակարգի մյուս մասնակից «Բարվա» ՍՊԸ-ի հայտը համարվել է բավարար, որի արդյունքում Ընթացակարգի հաղթող է ճանաչվել «Բարվա» ՍՊԸ-ն:

«ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ն բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստեր նշել է հետևյալը.

Փաստ 1. Կոնսորցիումի կողմից որպես «մասնագիտական փորձառություն» չափանիշ հայտով ներկայացվել է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր և որպես դրա ապացույց ներկայացրել է համապատասխան պայմանագրեր և հանձնման-ընդունման ակտեր, ընդ որում, Ընկերության կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրի (կամ պայմանագրերի) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չի եղել Ընկերության ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չի եղել Ընկերության ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Փաստ 2. Հրավերի 1-ին մասի 2-րդ կետի 2.1. ենթակետի առաջին պարբերության համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելիս նմանատիպ են համարվում հակակարկտային կայանների ապրանքների մատակարարման գործարքները: Ընդ որում, այդ պարբերության վերջին նախադասության համաձայն՝ «Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները»:

Փաստ 3. «ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ 15/06» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.08.2015թ. թիվ 1 որոշմամբ ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից հայտարարված նախորդ հրավերի համաձայն, որը ճանաչվել է ապօրինի՝ հակակարկտային կայանների տեղակայման մասին խոսք անգամ չէր գնում և ՀՀ Արարատի մարզպետարանի կարիքների համար՝ ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 2-ի N 766-Ն որոշմամբ ՀՀ Արարատի մարզպետարանին հատկացված միջոցներով իրականացվող ծրագրերի շրջանակներում Արարատի մարզպետարանին հատկացվել է

գումար՝ ***հակակարկտային կայանների ձեռքբերման*** նպատակով, այլ ոչ թե՝ ձեռք բերման և տեղակայման նպատակով:

«ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ն, որպես բողոքի իրավական հիմք և հիմնավորում ներկայացրել է հետևյալը.

Ըստ «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի՝ Ընթացակարգը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի 20.11.2015թ. թիվ 4 արձանագրությունը (այսուհետև՝ Որոշում) կայացվել է ՀՀ օրենսդրության խախտմամբ, Որոշմամբ խախտվել են Ընկերության ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված իրավունքները և Ընթացակարգը պետք է հայտարարվի ապօրինի, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Հավասարության սկզբունքից ելնելով ցանկացած անձ, որը հայտ է ներկայացնում պետական գնման գործընթացին մասնակցելու, պատվիրատուի գործողություններից պետք է վստահ լինի, որ բոլոր մասնակիցները հավասար են և ընթացակարգում հաղթող կարող է ճանաչվել միայն այն մասնակիցը, որը բավարարում է ՀՀ պետական գնումները կարգավորող օրենսդրության պահանջներին: Սակայն, «ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ 15/07» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով տեղի է ունեցել հակառակը:

Օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ***հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:***

Հրավերի 1-ին՝ գնման առարկայի բնութագիրը, մասի, 2-րդ՝ մասնակցի որակավորման չափանիշների պահանջները և դրանց գնահատման կարգը, կետի, 2.1 ենթակետի 1-ին պարբերության համաձայն պահանջվել է՝ «Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա

(դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: ***<u>Նմանատիպ են համարվում հակակարկտային կայանների ապրանքների մատակարարման գործարքները:</u>*** Մասնակիցը, որպես սույն ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ, հայտով ներկայացնում է նաև նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը»:

Ելնելով Օրենքի և Հրավերի 1-ին մասի գնման առարկայի բնութագրի պահանջներից՝ Կոնսորցիումը ներկայացրել է հակակարկտային կայանների մատակարարման գործարքների պայմանագրեր և հանձնման-ընդունման ակտեր: Կոնսորցիումը հայտը պատրաստելիս՝ առաջնահերթ հիմք է ընդունել հրավերի գնման առարկայի բնութագրի վերը նշված կետը, որ որպես մասնագիտական փորձառության չափանիշ գնահատվում է հակակարկտային կայանների մատակարարման գործարքները, այլ ոչ թե հակակարկտային կայանների մատակարարման և տեղակայման գործարքները:

Ավելին՝ «Լոկատոր» ՓԲԸ-ն չէր կարող հիմք ընդունել հրավերի 2-րդ մասի կետը, քանի որ նախ. Հրավերի 2-րդ մասի՝ Հայտը պատրաստելու հրահանգը, վերտառությամբ, 2.1. կետում նշված է, որ «Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել Մասնակիցներին հայտը պատրաստելիս», այսինքն այն չի կարող պարտադիր համարվել և առաջնահերթություն սահմանել մասնակիցների համար, գտնում ենք նաև, որ այդ հրահանգը խորհրդակցական բնույթի է, և որ հայտը պատրաստելիս, եթե հրավերի գնման առարկայի բնութագրում և վերը նշված հրահանգում սահմանված են տարբեր պահանջներ, ապա մասնակիցը չպետք է հիմք ընդունի հրահանգում նշված պահանջը՝ անտեսելով հրավերի գնման առարկայի բնութագրում նշված պահանջը, այն էլ այն դեպքում, երբ Հրավերի 2-րդ մասի, 2-րդ կետի, 2.1. ենթակետի 1-ին պարբերության

վերջին նախադասությունում հստակ գրված է, որ «Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները»: Հետևաբար Ընկերությունը՝ որպես «Մասնագիտական փորձառություն» չափանիշ, ներկայացնելով միայն հակակարկտային կայանների մատակարարման գործարքների պայմանագրերն, ամբողջությամբ համապատասխանել է այդ չափանիշին:

Հանձնաժողովը, «Մասնագիտական փորձառություն» չափանիշի վերաբերյալ իբրև անհամապատասխանություն նշել է, որ առկա է «անհամապատասխանություն հրավերի պահանջի նկատմամբ», այսինքն Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը կարող էին անհամապատասխան համարվել, եթե հակասեին հրավերի գնման առարկայի պահանջին, այլ ոչ թե հրահանգին, որն ուղղակի կարող է օժանդակել մասնակցին պատրաստելու հայտը:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Միևնույն ժամանակ Ընկերությունը գտնում է, որ առկա է նաև Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, համաձայն որի հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընկերության կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» չափանիշ հայտով ներկայացրել է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր և որպես դրա ապացույց ներկայացրել է համապատասխան պայմանագրեր և հանձնման-ընդունման ակտեր, ընդ որում, Ընկերության կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրի (կամ պայմանագրերի) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չի եղել Ընկերության ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ

պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չի եղել Ընկերության ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Ինչ վերաբերում է Փաստ 2-ում նշվածին, ապա Ընկերությունը հայտնել է, որ գնման առարկայի բնութագրում նշվել է, որ մասնակցի որակավորումը «Մասնագիտական փորձառություն» չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն պարբերությամբ նախատեսված պահանջները, որը Հանձնաժողովը հաշվի չի առել, և որով խախտել է Օրենքի 12-րդ հոդվածի 1-ի մասի և 31-րդ հոդվածի պահանջները:

Ընկերությունը նշել է, որ գնահատող հանձնաժողովը հաշվի չի առել նաև ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 69-րդ կետը, որի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

Գնահատող հանձնաժողովի կողմից անբավարար ճանաչված երկրորդ չափանիշին անդրադառնալիս՝ Ընկերությունը նշել է նաև, որ Հանձնաժողովի կողմից նախապես հարցում չի արվել Ընկերությանը, որ առկա է անճշտություն նաև «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշում, և Ընկերությունը գտնում է, որ այդ չափանիշը չէր կարող անբավարար համարվել, քանի որ Ընկերությունը հնարավորություն չի ունեցել ներկայացնել այդ, իբրև, անճշտության վերաբերյալ հիմնավորում:

Ընկերությունը տեղեկացրել է, որ գնահատող հանձնաժողովը հաշվի չի առել այն հանգամանքը, որ հակակարկտային կայանների տեղակայումը հրավերի բնութագրի

պահանջ չէր, և նույնպես չէր կարող անբավարար ճանաչվել: Ավելին, Ընկերությունն, այնուամենայնիվ, հաշվի առնելով այն, որ հակակարկտային կայանները մատակարարելու համար, անհրաժեշտ է որպեսզի այն տեղադրվի բետոնե պատվանդանների վրա, ուստի, հայտը ներկայացրել է համատեղ գործունեության պայմանագրով և «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ն ունի համապատասխան լիցենզիաները և փորձը, չնայած նրան, որ այն գնման առարկայի պահանջ չէ:

Ընկերությունը բողոքը քննող հանձնաժողովի ուշադրությունն է հրավիրել նաև Փաստ 3-ում նշված հանգամանքի վրա:

Մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 2-ի թիվ 766-Ն որոշման 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության մարզերի՝ առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից հատկացնել 4,365,000.0 հազ. դրամ, այդ թվում...Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանին՝ 630,000.0 հազ. դրամ՝ համաձայն N 2 հավելվածի...»: Թիվ 2 հավելվածի 4.1 կետի համաձայն՝ «Հակակարկտային կայանների ձեռք բերում» անվանման ներքո հատկացվել է 100,000,000 ՀՀ դրամ: Ինչպես նշված է որոշման հավելված 2-ում հակակարկտային կայանների տեղակայում, որպես աշխատանքի ձեռքբերում, նշված չէ և «ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ 15/06» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.08.2015թ. թիվ 1 որոշմամբ ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից հայտարարված նախորդ հրավերի համաձայն, հակակարկտային կայանների տեղակայման մասին խոսք չի եղել, ավելին, Հրավերի վերնագրով նույնպես նշված է միայն հակակարկտային կայանների ձեռք բերում: Սակայն, ապօրինի ճանաչված ընթացակարգից հետո գնահատող հանձնաժողովը, անտեսել է ՀՀ կառավարության 2015թ. թիվ 766-Ն որոշումը, ինքնուրույն որոշել է, որ չնայած նրան, որ այդ գումարը հատկացվել է միայն հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով, ապօրինի, ոչ որպես գնման առարկայի պահանջ ներառել են նաև հակակարկտային կայանների տեղակայման աշխատանքները՝ իբր շինարարական աշխատանք, որն էլ հիմք է հանդիսացել Ընկերության հրավերն անբավարար ճանաչելու:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ Ընկերությունը փաստել է միայն այն, որ Հանձնաժողովը, չնայած նրան, որ «Լոկատոր» ՓԲԸ-ն առաջարկել է ավելի ցածր գին, քան Ընթացակարգի մյուս մասնակիցը, այնուամենայնիվ անհիմն, առանց պատճառաբանության, հաշվի չառնելով գնումները կարգավորող օրենսդրության և Հարվերի գնման առարկայի պահանջները, չափանիշները, անբավարար է ճանաչել Ընկերության հայտը, Հայաստանի Հանրապետությանը պատճառելով նաև նյութական վնաս, որը գտնվելով սոցիալ-տնտեսական ծանր վիճակում՝ բյուջեի պահուստային ֆոնդից գումար է հատկացրել Պատվիրատուին հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով, որն, Ընկերության կարծիքով, ոչ այլ ինչ է, եթե ոչ կանխակալ վերաբերմունք, անհավասար մրցակցություն:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45–րդ, 48րդ և 49-րդ հոդվածների պահանջները, «Լոկատոր» ՓԲԸ-ն խնդրել է՝

- կիրառել ժամանակավոր միջոց՝ կողմերի միջև պայմանագրի կնքման մասին որոշումը կասեցնել, քանի որ Ընկերության հայտը սխալ է մերժվել, և եթե «Բարվա» ՍՊԸ-ի հետ պայմանագիրը կնքվի, ապա սույն բողոքն որոշ մասով կդառնա առարկայազուրկ,
- չեղյալ հայտարարել 20.11.2015թ. կայացված «ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ 15/07» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրությամբ «Լոկատոր» ՓԲԸ-ի հայտը անբավարար ճանաչելու որոշումը,
- պայմանագիրը կնքված լինելու դեպքում հայտարարել 18.11.2015թ. կայացված «ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ 15/07» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգն ապօրինի:

2. <u>«Բարվա» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

«Բարվա» ՍՊԸ-ն 25.11.2015թ. գրությամբ Կենտրոնին է ներկայացրել «ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ 15/07» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգն ապօրինի ճանաչելու մասին «Լոկատոր»

ՓԲԸ-ի 23.11.2015թ. բողոքի վերաբերյալ առարկությունները, որի համաձայն՝ «Բարվա» ՍՊԸ-ն գտնում է, բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

1. Դիմելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին՝ «Լոկատոր» ՓԲԸ-ն բողոքով նշել է, որ Հանձնաժողովի կողմից հրապարակված հայտարարությունում առկա են անճշտություններ, մասնավորապես՝ հրավերում գնման առարկան նշված է հակակարկտային կայանների մատակարարում, իսկ հրահանգում՝ մատակարարում և տեղադրում: Վերը նշվածի վերաբերյալ «Բարվա» ՍՊԸ-ն հայտնել է, որ հրավերը հրահանգի հետ միասին կազմում են մեկ ամբողջություն, դրանք գործում են միմյանց հետ և դրանք տարանջատել չի կարելի: Եթե ենթադրենք հայտարարության մեջ տեղադրված լինի միայն հրավերը՝ առանց հրահանգի, ապա դա կհամարվի անվավեր և հակառակը:

2. «Լոկատոր» ՓԲԸ-ն բողոքով նշել է նաև, որ Հանձնաժողովի կողմից կազմված թիվ 4 արձանագրությունը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության խախտմամբ: Ըստ «Բարվա» ՍՊԸ-ի՝ դա չի համապատասխանում իրականությանը, քանի որ Հանձնաժողովի կողմից կայացված թիվ 4 արձանագրությունը բխում է բացառապես գործող <u>օրենսդրության</u> պահանջներից: Հանձնաժողովը Կոնսորցիումի հայտը գնահատել է հրավերի պահանջներին անհամապատասխան, քանի որ վերջինիս կողմից չէին ներկայացվել մասնագիտական փորձառությունը հիմնավորող փաստաթղթեր, մասնավորապես՝ նախկինում կատարված նմանատիպ աշխատանքներ: ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 74-րդ կետի «զ» ենթակետի հայտերի բացումը, գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է հայտերի բացման նիստում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն հայտերը, որոնք գնահատվել են հրավերի պահանջներին անբավարար, մերժվում են, իսկ հրավերի պահանջները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած նիստի ներկա մասնակիցների ներկայացուցիչների հետ կազմակերպվում են ներկայացված գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ և բանակցությունների ավարտին նվազագույն գին ներկայացրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, որի հետ մեկ աշխատանքային օրվա ընթացքում սահմանված կարգով կնքվում է պայմանագիր: Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում, պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին: Հանձնաժողովը հնարավորություն է տվել Բողոք բերողին ներկայացնել համապատասխան

փաստաթղթեր, սակայն վերջինիս կողմից դրանք չեն ներկայացվել և այդ իսկ պատճառով նրա հայտը գնահատվել է անբավարար:

3. Ինչ վերաբերում է «Լոկատոր» ՓԲԸ-ի բողոքում նշած այն փաստարկին, որ հրավերով նախատեսված է եղել միայն գնման առարկայի մատակարարում, այդ կապակցությամբ «Բարվա» ՍՊԸ-ն նշել է, որ եթե բողոք բերողը գիտեր, որ Ընթացակարգը հայտարարված է միայն հակակարկտային կայանների ձեռքբերման պայմանով, ապա այդ դեպքում ինչու էր վերջինս «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ի հետ կնքում համատեղ գործունեության պայմանգիր և Կոնսորցիումով մասնակցում հայտարարված ընթացակարգին: Բողոք բերողը քաջ գիտակցել և իմացել է, որ Ընթացակարգը վերաբերում է ոչ միայն գնման առարկայի մատակարարմանը, այլև դրա տեղադրմանը և այդ պատճառով է, որ ներկայացրել է Կոնսորցիումի մյուս մասնակից «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ի շինարարական աշխատանքներ կատարելու լիցենզիան: Հարց է առաջանում, եթե միայն պետք է մատակարարվեր գնման առարկան, ապա ինչու էր հայտին կցվում նաև լիցենզիա: Բացի այդ պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված գնման առարկայի տեխնիկական բնութագրում հստակ նշված է, որ մատակարարումից բացի պետք է իրականացվեն նաև տեղակայման աշխատանքներ՝ այդ թվում նախատեսում են կայանի տեղադրման տարածքի հարթեցման և բետոնապատման կամ բետոնե սալիկով հիմքի ստացման աշխատանքներ: Այդ նպատակով Հրավերի «Տեխնիկական միջոցներ» չափանիշով պահանջվում էին համապատասխան սարքեր, մասնավորապես՝ գեներատոր, որը կապահովի հանգույցների տեղակայման-մոնտաժման համար էլեկտրական սնուցումը, իսկ Հրավերի «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշով պահանջվում էին համապատասխան մասնագետներ՝ շինարար և եռակցող: Բացի այդ, Հրավերի 6-րդ Հավելվածի Պայմանագրում հստակ նշված է, որ Պայմանագրի առարկա է հանդիսանում հակակարկտային կայանների պատրաստումը և տեղադրումը Պատվիրատուի կողմից նշված համայնքների տարածքում:

4. «Բարվա» ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից որպես իր մասնագիտական փորձառությունը հիմնավորող ապացույցներ հայտին կցված մատակարարման պայմանագրերով որպես Գնորդ նշված է Կոնսորցիումի մյուս անդամը՝ «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ն: Ըստ «Բարվա» ՍՊԸ-ի՝ օրենսդրական առումով վերը նշվածը անվիճելի գործարք է, սակայն եթե դա համեմատենք սույն գործի փաստական հանգամանքների հետ կարելի է որոշակի եզրակացության հանգել:

Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 521-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մատակարարման պայմանագրով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մատակարար-վաճառողը պարտավորվում է իր արտադրած կամ գնած ապրանքները պայմանավորված ժամկետում (ժամկետներում) հանձնել գնորդին՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ անձնական, ընտանեկան, տնային կամ այլ նմանօրինակ օգտագործման հետ չկապված նպատակներով օգտագործելու համար:

Վերը նշված իրավական նորմի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ Օրենսդիրը հստակ սահմանել է, որ մատակարարման պայմանագրի առարկան գնորդը պարտավոր է բացառապես օգտագործել ձեռնարկատիրական նպատակներով, իսկ հաշվի առնելով Ընթացակարգի գնման առարկայի տեխնիկական առանձնահատկությունը՝ այդ ապրանքը ձեռք բերողը այն պետք է տեղադրի որոշակի վայրում, որպեսզի կարողանա այն օգտագործել դրա նպատակային նշանակությանը համապատասխան: Եթե իրականում «Լոկատոր» ՓԲԸ-ի և «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ի միջև կնքված մատակարարման պայմանագիրը առաջացրել է համապատասխան իրավաբանական հետևանքներ, այսինքն՝ ապրանքը հանձնվել է «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ին, ապա վերջինս ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում այն պետք է տեղադրած լիներ որևէ երրորդ անձի պատվերով և դրա վերաբերյալ առկա կլիներ համապատասխան պայմանագիր, ինչպես նաև հանձնման-ընդունման ակտեր: Նմանատիպ որևէ փաստաթուղթ «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից չի ներկայացվել:

Բացի այդ, համեմատելով «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փորձառությունը հիմնավորող մատակարարման պայմանագրերի գները և գնային առաջարկը, տեսնում ենք, որ առկա է գների զգալի տարբերություն և այդ կերպ «Լոկատոր» ՓԲԸ-ն փորձել է հիմնավորել իր մասնագիտական փորձառությունը:

5. «Բարվա» ՍՊԸ-ն Խորհրդի ուշադրությունն է հրավիրել նաև բողոքի առարկային (պահանջին): «Լոկատոր» ՓԲԸ-ն բողոքի եզրափակիչ մասի 3-րդ կետով Խորհրդին խնդրել է, ապօրինի ճանաչել Ընթացակարգը: «Բարվա» ՍՊԸ-ն նշել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով հստակ սահմանված է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի լիազորությունները և Օրենսդիրը Խորհրդին նման լիազորություն չի վերապահել:

Ամփոփելով վերը շարադրվածը «Բարվա» ՍՊԸ-ն նշել է, որ «Լոկատոր» ՓԲԸ-ն քաջ գիտակցել է Ընթացակարգի գնման առարկայի տեխնիկական առանձնահատ-

կությունը և փորձել է Կոնսորցիումի միջոցով լրացնել մասնագիտական փորձառության պակասը՝ նախկինում կատարված նմանատիպ աշխատանքների մասով, սակայն չի ներկայացրել որևէ վերաբերելի փաստաթուղթ կապված հակակարկտային կայանների տեղակայման հետ:

Հաշվի առնելով վերոգրյալը «Բարվա» ՍՊԸ-ն խնդրել է բողոքը մերժել՝ անհիմն լինելու պատճառով:

3. ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

ՀՀ Արարատի մարզպետարանը 02.12.2015թ. թիվ 1/3/6005-15 գրությամբ ներկայացրել է «ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ 15/07» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

Միաժամանակ վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի ու «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ի կոնսորցիումը և «Բարվա» ՍՊԸ-ն:

Կոնսորցիումի կողմից ներկայացված հայտում հայտնաբերվել են անհամապատասխանություններ՝ «Մասնագիտական փորձառություն» և «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշների նկատմամբ, որից հետո գնահատող հանձնաժողովը գրավոր ծանուցել է «Լոկատոր» ՓԲԸ-ին՝ ներկայացնելու հիմնավորումներ անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ: Համապատասխան կազմակերպության կողմից ներկայացված հիմնավորումները քննարկելուց հետո գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել, որ դրանք չեն բավարարում Պատվիրատուի կողմից հրապարակված հրավերի պահանջներին:

Գնահատող հանձնաժողովը 20.11.2015թ. թիվ 4 արձանագրությամբ անբավարար է գնահատվել «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի ու «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ի կոնսորցիումի հայտը՝ «Մասնագիտական փորձառություն» և «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշների մասով:

Պատվիրատուն «Լոկատոր» ՓԲԸ-ի ներկայացրած բողոքի **Փաստ 1-ի և Փաստ 2-ի վերաբերյալ** հայտնել է, որ «Լոկատոր» ՓԲԸ-ի ներկայացրած հայտում «Մասնագիտական փորձառություն» և «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշներով նախկինում նմանատիպ կատարված աշխատանքների պայմանագրերում ներառվել է միայն «Հակակարկտային կայանների մատակարարում» աշխատանքները, կայանների տեղակայման մասով, որպես «Էս- Թի-Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաթեթում նույնպես բացակայում է նախկինում նմանատիպ կատարված հակակարկտային կայանների տեղակայման աշխատանքները, որի հիմքով գնահատող հանձնաժողովը տվյալ չափանիշները գնահատել է անբավարար:

Պատվիրատուն **Փաստ 3-ի** վերաբերյալ հայտնել է, որ՝ ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 2-ի N 766-Ն որոշման 2-րդ հավելվածով ՀՀ Արարատի մարզպետարանին հատկացված միջոցներից նախատեսվել է նաև ՀՀ Արարատի մարզպետարանի կարիքների համար 25 հատ հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով 100.0մլն. դրամ գումար: Վերոնշյալ որոշմամբ «Հակակարկտային կայանների ձեռքբերում», ծրագրի անվանումն է և նույն որոշմամբ մարզին հատկացված 630.0մլն. դրամի շրջանակներում մարզում այժմ իրականացվում է ևս 30 տարբեր հրատապ ծրագրեր, որտեղ նույնպես նշված են նախատեսվող, կատարվող աշխատանքների, ծրագրերի անվանումներ, այլ ոչ բնութագրեր: Օրինակ՝ «Հայանիստ համայնքի մանկապարտեզի մասնակի վերանորոգման և կահույքի ձեռքբերման նպատակով Հայանիստ համայնքին աջակցության ցուցաբերում» ծրագրի իրականացման համար հրավերի տեխնիկական բնութագրում է նկարագրվում ձեռքբերվող կահույքի ձևի, տեսակի և այլ հատկանիշներ բնութագրող տվյալներ, այլ ոչ թե հրավերի վերնագրում, բնականաբար հակակարկտային կայանների ձեռք բերում դա չի նշանակում լոկ միայն ապրանքի ձեռք բերում: Հանձնաժողովը հրավերի դրույթներում և տեխնիկական բնութագրում հստակ նշել է հետևյալ **պահանջը՝** «Հակակարկտային կայանների ձեռքբերում և տեղակայում» ինչը գնահատող հանձնաժողովի գրավոր հարցումից հետո չի կարողացել հիմնավորել «Լոկատոր» ՓԲԸ-ն իր ներկայացրած փաստաթղթերով:

Այսպիսով, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Լոկատոր» ՓԲԸ-ի ներկայացրած հայտն անբավարար ճանաչելու մասին որոշումը հիմնավոր է և այն բխում է գնումները կարգավորող օրենսդրության պահանջներից:

4. ԳԲԽ-44/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 07.12.2015թ. եզրակացությունը և առաջարկել է «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի 23.11.2015թ. ներկայացրած բողոքը մերժել:

5. ԳԲԽ-44/15 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-44/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Արարատի մարզպետարանի կարիքների համար հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ 15/07» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով համատեղ գործունեության կարգով հայտ են ներկայացրել «Լոկատոր» ՓԲԸ-ի ու «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ի կոնսորցիումը, որի գնային առաջարկը կազմել է 59 550 000 ՀՀ դրամ, և «Բարվա» ՍՊԸ-ն, որի գնային առաջարկը կազմել է 66 250 000 ՀՀ դրամ:

2. Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.1 կետով սահմանվել են հետևյալ պահանջները.

Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

«Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ

գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայ-տությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: **Նմանատիպ են համարվում հակակարկտային կայանների ապրանքների մատակարարման գործարքները**: Մասնակիցը, որպես նույն ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ, հայտով ներկայացնում է նաև նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

2) Մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն (Հավելված 3.2) համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին: Նմանատիպ են համարվում հակակարկտային կայանների ապրանքների մատակարարման գործարքները:

3. Հրավերի 2-րդ մասի՝ գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 2-րդ կետի 2.2.1 ենթակետի 3) պարբերության համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են նույն հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: **Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները հետևյալն են՝ հակակարկտային կայանների մատակարարում և *տեղակայում*:**

4. Հրավերի Հավելված N 1 տեխնիկական բնութագրով սահմանված «Հակակարկտային կայան» գնման առարկայի համար որպես տեխնիկական բնութագիր նշվել է՝ հակակարկտային կայան, պաշտպանող ծածկույթը 100 հա, մեկ կրակոցի համար ծախսվող պայթուցիչ գազի (պրոպան-բութանային խառնուրդ) ծախսը՝ ոչ ավել, քան 5գ, կրակոցների ընդհանուր քանակը ոչ պակաս 20000, լիցքավորման համար անհրաժեշտ

գլանանոթների քանակը՝ 6 հատ, յուրաքանչյուրը 20 կգ տարողությամբ: Էլեկտրասնուցումը ավտոնոմ՝ արևային մարտկոցի միջոցով: Հեռակառավարումը բջջային հեռախոսացանցի և կենտրոնացված համակարգչային համակարգի միջոցով: ***<u>Տեղակայման աշխատանքները նախատեսում են կայանի տեղադրման տարածքի հարթեցման և բետոնապատման կամ բետոնե սալիկով հիմքի ստացման աշխատանքներ:</u>*** Կայանը և դրա մուտքը պետք է պաշտպանված լինի կողմնակի անձանց ելումուտից:

5. «Լոկատոր» ՓԲԸ-ն «ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ 15/07» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով՝ Հրավերի հավելված N 3.1-ով, ներկայացրել է Մասնագիտական փորձառության մասին հայտարարություն, որով «Լոկատոր» ՓԲԸ-ն հայտնել և հավաստել է, որ ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է հակակարկտային կայանների մատակարարման գործարքներ, որի ընդհանուր արժեքը կազմել է՝ 34 440 000 ՀՀ դրամ և պարտավորվել է նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

6. «Լոկատոր» ՓԲԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով՝ Հրավերի հավելված N 3.2-ով, ներկայացրել է Մասնագիտական փորձառության մասին հայտարարություն, որով «Լոկատոր» ՓԲԸ-ն հայտնել և հավաստել է, որ ունի համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն:

7. «Լոկատոր» ՓԲԸ-ի և «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ի կոնսորցիումը, որպես նախկինում կատարված համանման պայմանագրեր, ներկայացրել է «Լոկատոր» ՓԲԸ-ի և «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ի միջև 09.12.2014թ. կնքված հակակարկտային կայանների առք ու վաճառքի Ա14-018/1 և «Լոկատոր» ՓԲԸ-ի ու «Երազ Սպասարկում» ՍՊԸ-ի միջև 02.10.2015թ. կնքված հակակարկտային կայանների առք ու վաճառքի Ա15-012 պայմանագրերը:

8. Ընթացակարգի համակարգող՝ Գ. Եղիազարյանը, <u>info@locator.am</u> էլեկտրոնային փոստին ուղղված ծանուցումամբ հայտնել է, որ ՀՀ Արարատի մարզպետարանի կարիքների համար հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ 15/07» ծածկագրով առանց

գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի մասնակից «Լոկատոր» ՓԲԸ-ի ներկայացրած հայտում Հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջի նկատմամբ: Հրավերի 2-րդ մասի 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են նույն հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները հետևյալն են՝ հակակարկտային կայանների մատակարարում և տեղակայում: Ծանուցմամբ նշվել է, որ «Լոկատոր» ՓԲԸ-ի ներկայացրած հայտում բացակայում է հակակարկտային կայանների տեղակայման կատարված աշխատանքների վերաբերյալ պայմանագրերի պատճենները և առաջարկվել է շտկել անհամապատասխանությունը ու մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քննարկմանը:

9. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 20.11.2015թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն՝ որոշել է անբավարար գտնահատել «Լոկատոր» ՓԲԸ-ի և «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ի կոնսորցիումով ներկայացրած հայտը, քանի որ հայտը չի համապատասխանել «Մասնագիտական փորձառություն», «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշներին:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝

բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի հայտերի պատրաստման հրահանգները, իսկ նույն մասի 3-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի որակավորման չափանիշները, մասնակցության իրավունքի պահանջները և դրանց գնահատման կարգը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 65-րդ կետի համաձայն՝ մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Հրավերի ամբողջական փաթեթի վերլուծության արդյունքում Խորհուրդը արձանագրում է, որ Հրավերի **Հավելված N 1 տեխնիկական բնութագրով** հստակ նշված է, որ մատակարարումից բացի, ***պետք է իրականացվեն նաև կայանների տեղակայման աշխատանքներ***, մասնավորապես՝ ***տեղակայման աշխատանքները նախատեսում են կայանի տեղադրման տարածքի հարթեցման և բետոնապատման կամ բետոնե սալիկով հիմքի ստացման աշխատանքներ:***

Խորհուրդը հարկ է համարում անդրադառնալ նաև Հրավերի Հավելվածի N 6 պետության կարիքների համար հակակարկտային կայանների մատակարարման գնման պայմանագրի նախագծին, որի համաձայն՝ պայմանագրի առարկա է հանդիսանում հակակարկտային կայանների պատրաստումը և ***տեղադրումը*** Պատվիրատուի կողմից նշված համայնքների տարածքում:

Ըստ Խորհրդի՝ վերոհիշյալը վկայում է, որ «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի պնդումը, որ հակակարկտային կայանների տեղակայումը Հրավերի բնութագրի պահանջ չի հանդիսացել, չի համապատասխանում իրականությանը, քանի որ Հրավերով հստակ սահմանվել է կայանների տեղակայման աշխատանքների պահանջը, ավելին, տրվել է նաև տեղակայման աշխատանքների նկարագիրը:

Ավելին, Խորհուրդը արձանագրում է, որ ***կայանների տեղակայման աշխատանքների կատարումն ապահովելու համար*** Հրավերի առաջին մասի առաջին բաժնով պահանջվել է բնակելի, հասարակական, արտադրական ոլորտում շինարարության իրականացման լիցենզիայի առկայություն, Հրավերի «Տեխնիկական միջոցներ» չափանիշով պահանջվել է համապատասխան սարքեր, մասնավորապես՝ գեներատոր, որը կապահովի հանգույցների տեղակայման-մոնտաժման համար էլեկտրական սնուցումը, Հրավերի «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշով՝ համապատասխան մասնագետներ՝ ինժեներ-շինարար, բարձրակարգ զոդող և էլեկտրոնային տեխնիկայի ինժեներ, իսկ Հրավերի 2-րդ մասի՝ գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 2-րդ կետի 2.2.1 ենթակետի 3) պարբերությամբ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակ են համարվել հակակարկտային կայանների մատակարարումը և ***տեղակայումը:***

Խորհուրդը գտնում է, որ հիմնավոր չէ նաև «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի այն պնդումը, որ գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգը պարտադիր չէ և կրում է խորհրդակցական բնույթ, քանզի Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հայտերի պատրաստման հրահանգը հանդիսանում է հրավերի բաղկացուցիչ մաս, իսկ մասնակցի հայտը Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետք է բավարարի հրավերով, այդ թվում նաև հրավերի մաս հանդիսացող հայտերի պատրաստման հրահանգով նախատեսված պայմաններին:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.11.2015թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.2 ենթակետով կայացրած որոշումը համապատասխանում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, քանի որ տվյալ դեպքում պահանջվել է ներկայացնել ***հակակարկտային կայանների*** մատակարարման և ***տեղակայման գործարքներ,*** սակայն Կոնսորցիումի կողմից ներկայացվել է միայն «Լոկատոր» ՓԲԸ-ի և «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ի միջև 09.12.2014թ. կնքված հակակարկտային կայանների առք ու վաճառքի Ա14-018/1 և «Լոկատոր» ՓԲԸ-ի ու «Երազ Սպասարկում» ՍՊԸ-ի միջև 02.10.2015թ. կնքված հակակարկտային կայանների առք ու վաճառքի Ա15-012 պայմանագրերը, այսինքն հայտում բացակայել է հակակարկտային կայանների ***տեղակայման*** գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչն էլ հիմք է հանդիսացել Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով «Լոկատոր» ՓԲԸ-ի և «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ի կոնսորցիումով ներկայացրած հայտը անբավարար գնահատելուն:

Բացի այդ, Խորհուրդը հայտնում է, որ դեռևս առկա չէ հայտարարություն «ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ 15/07» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի վերաբերյալ, ուստի հիմք ընդունելով Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետը, որի համաձայն Խորհուրդն իրավունք ունի հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ *պայմանագիրը կնքելուց հետո*, Խորհուրդը գտնում է, որ «Լոկատոր» ՓԲԸ-ի 23.11.2015թ. բողոքով ներկայացված Ընթացակարգը ապօրինի ճանաչելու մասին պահանջն ևս անհիմն է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Լոկատոր» ՓԲԸ-ի 23.11.2015թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Լուսինե Ոսկանյան**

Անդամներ՝ **Նարինե Նիկոլայան**

Սուսաննա Աղաջանյան